Հ. Ս. ԿՈՐԽՄԱԶՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1943 ԹԹ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և պատերազմի տարիներին Թուրքիան, շնորհիվ իր ստրատեգիական և ռազմաքաղաքական բացառիկ կարևոր նշանակության, դարձավ իմպերիալիստական մեծ տերությունների քաղաքական մեծ ակտիվության նշանակետը։ Թուրքիան, իր հերթին, արտաքին քաղաքականության ասպարեզում համառորեն իր շահերն էր հետապնդում։ Այս հանգամանքը, հզոր տերությունների հետ Թուրքիայի հարաբերություններն ուսումնասիրելիս, շատ հաճախ բավարար ուշադրության չի արժանանում։ Այդ իսկ պատճառով մասամբ բացատրվում է Թուրքիայի միանգամայն ինքնուրույն քաղաքականություն վարելու հանգամանքը, իսկ թուրքական կառավարության քաղաքական անհետևողականությունը բացատրվում է տվյալ ժամանակաշրջանում քաղաքական այս կամ այն դաշինքի՝ «առանցքի» երկրների և կամ հակահիտլերյան կոալիցիայի ազդեցության ուժեղացմամբ։ Շատ զգայուն կերպով արձագանքելով ուժերի հարաբերակցության յուրաքանչյուր փոփոխությանը և հետևողականորեն «սրբագրելով» երկրի արտաքին քաղաքական դիրքորոշումը պատմական և միջազգային իրավիճակին համապատասխան՝ թուրքական կառավարությունը քաղաքականության կեռմաններում դրսևորել է որոշակի տրամաբանություն՝ պայմանավորված նախ և առաջ թուրքական կառավարող շրջանների ազգայնական, դասակարգային և հակասովետական տրամադրվածությամբ։

Անգլիական դիվանագիտության նշանակալից հաջողությունը պիտի համարել Թուրքիայի միացումը անգլո-ֆրանսիական դաշինքին[1] նախապատերազմյան վերջին գարնանը[2]։ Արևմտյան երկրների հետ

համաձայնագիրը, որոնց ռազմական գերազանցությանը, «առանցքի», երկրների նկատմամբ Թուրքական կառավարությունն այդ ժամանակ համոզված էր, թվում էր շահեկան է Թուրքիայի համար, քանզի ուղեկցվում էր սովետա-Թուրքական պայմանագրի կնքման բանակցություններով՝ ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև նախատեսվող համաձայնագրին զուգահեռ[3]։ Թուրքական կառավարությունը, հավանաբար, ենթադրում էր, որ սովետա-Թուրքական պայմանագիրը կստեղծի իր համար բարենպաստ իրավիճակ. ՍՍՀՄ-ից Թուրքիան կստանա անվտանգության առավել ազդեցիկ երաշխիք, իսկ ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև համաձայնագիրը կդյուրացնի մանևրումը Սովետական Միության և արևմտյան երկրների միջև և միաժամանակ Թույլ կտա հետևելու վերջիններիս՝ ՍՍՀՄ-ի դեմ գերմանական ագրեսիա հրահրելու մյունխենյան կուրսին։ Սակայն Թուրքական կառավարությունը, որոշելով չսպասել սովետա-անգլո-ֆրանսիական բանակցությունների ավարտին, ՍՍՀՄ-ից առանձին, պայմանավորվեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Անգլիան և Ֆրանսիան, հավատարիմ իրենց հակասովետական քաղաքականությանը, Սովետական Միությանը կանգնեցրին Գերմանիայի հետ չհարձակվելու պայմանագիր կնքելու անհրաժեշտության առջև։ 1939 թ. օգոստոսի 23-ի սովետա-գերմանական պայմանագրի կնքմամբ արմատապես փոխվեց միջազգային իրավիճակը[4]։ Այն օբյեկտիվ հնարավորություն տվեց Թուրքիային, Սովետական Միության հետ բարեկամական հարաբերություններ պահպանելով հանդերձ, բռնկվող միջազգային կոնֆլիկտի ժամանակ[5] մնալ չեզոք՝ չհարելով պատերազմող իմպերիալիստական խմբավորումներից և ոչ մեկին։ Սակայն Թուրքական կառավարությունը չօգտագործեց այս հնարավորությունը և 1939 թ. հոկտեմբերի 19-ին՝ դաշնագիր ստորագրեց Գերմանիայի հետ արդեն պատերազմական վիճակում գտնվող Անգլիայի և Ֆրանսիայի հետ[6]։

Այլ կերպ ավարտվեցին Մոսկվայում տեղի ունեցող սովետա-Թուրքական երկկողմանի փոխօգնության բանակցությունները։ Համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվել չցանկացող Սովետական Միության պայմանները Թուրքական կողմը հրաժարվեց ընդունել[7]։ Անգլո-ֆրանս-Թուրքական դաշնագրի ստորագրումը և Թուրքական կառավարության դիրքորոշումը սովետա-Թուրքական բանակցությունների ժամանակ զգալիորեն բարդացրին սովետա-Թուրքական հարաբերությունները, որոնք, սակայն, շարունակում էին կարգավորվել 1925 թ. բարեկամության և չեզոքության պայմանագրի համաձայն։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Թուրքիան Անգլիայի և Ֆրանսիայի չպատերազմող դաշնակցի դիրք էր գրավել և մնաց այդպիսին մինչև 1940 թ. ամառը, ավելի ստույգ՝ մինչև Ֆրանսիայի պարտությունը։ Այնուհետև, պատերազմական հաջորդ տարվա ընթացքում՝ 1940 թ. հունիսից մինչև 1941 թ. մայիսը թուրքական կառավարությունը պահպանում է Անգլիայի նկատմամբ բարեհաճ չեզոքություն։ 1941 թ. հունիսից Թուրքիայի արտաքին քաղաքականության զարգացման նոր շրջան է սկսվում։ Մինչ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականության հարցին անդրադառնալը, հարկ ենք համարում նշել թուրքական դիվանագիտության հակասովետական բնույթը՝ ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից առաջ։

Այդ է վկայում 1940 թ. գարնանը անգլո-ֆրանս-թուրքական բանակցությունների բովանդակությունը[8]։ Թուրքական կառավարող շրջանները աջակցում էին դաշնակիցներին և բաժանում նրանց հակասովետական ծրագրերը, թաքցնելով իրենց շահագրգռվածությունը արևմտյան տերությունների Սովետական Միության ներխուժման հարցում (սովետա-ֆիննական պատերազմի առնչությամբ)։ Թուրքիայի միակ ցանկությունն էր իրեն չկապել ՍՍՀՄ-ի դեմ պատերազմական գործողություններին անմիջական մասնակցության պարտավորություններով, պատճառաբանելով թուրքական բանակի ոչ ժամանակակից սպառազինության և Անգլիայի՝ այդ բացը վերացնելու անկարողության փաստով[9]։ Նա ցանկանում էր, Անգլիան և Ֆրանսիան, սկսելով պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ, առանց թուրքական կառավարության պաշտոնական համաձայնության իրագործեն իրենց ռազմաօդային ուժերի տարանցումը[10]։ Թուրքական կառավարության կարծիքով ՍՍՀՄ-ի հաղթանակի դեպքում Թուրքիայի նման դիրքորոշումը բավականին պարկեշտ կնկատվեր։ Հակառակ դեպքում, Թուրքիայի ոչ պաշտոնական համաձայնությունը և լուռ համադործակցությունը մոռացության չէր մատնվի Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Փաստաթղթերը վկայում են, որ թուրքական կառավարող շրջանները, Սովետական Միության դեմ պատերազմից անչափ վախենալով հանդերձ, Կովկասի նկատմամբ զավթողական ծրագրեր են փայփայել[11]։ Ֆինլանդիայի հետ Սովետական Միության խաղաղության դաշնագրի կնքումը հոգս ցնդեցրեց արևմտյան տերությունների և Թուրքիայի հաշվարկները։

Թուրքական դիվանագիտության հակասովետական էությունը ավելի ցայտուն դրսևորվեց 1941 թ. մայիս-հունիս ամիսներին գերմանա-թուրքական բանակցությունների ժամանակ։ Թուրքական կառավարությունը բանակցությունների ընթացքում Սովետական Միության նկատմամբ բացառիկ անբարյացակամություն հանդես բերեց։ Այսպես օրինակ, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն Թուրքիայում Գերմանիայի դեսպան Պապենին հայտարարեց, որ Գերմանիան «Մարդկությանը ծառայած կլինի, եթե կործանի ժամանակակից Ռուսաստանը և ընդմիշտ վերացնի բոլշևիզմը»[12]։ Պրեզիդենտ Ինենյուն և Սարաշօղլուն հավաստիացնում էին, որ սովետա-գերմանական կոնֆլիկտի դեպքում Թուրքիան Գերմանիայի կողմում կլինի[13]։ Բանակցությունների ամբողջ ընթացքը ուղեկցվել է նման հայտարարություններով[14]։ Թուրքական կառավարությունը կանգ չառավ նաև իր պատրաստակամությունը հայտնելու և թույլատրելու՝ նախատեսվող գերմանա-սովետական պատերազմի ժամանակ ցանկացած թվով զինվորներով բեռնավորված գերմանական առևտրական նավերի անցումը նեղուցներով[15]։ ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի ներխուժումից մեկ օր առաջ, հունիսի 21-ին, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության գլխավոր քարտուղար Ն. Մենեմենջիօղլուն ամերիկյան դեսպանին հայտարարեց այն մասին, որ Թուրքիայի հետ բարեկամության և չհարձակվելու պայմանագիրը, իրենց կարծիքով, անհրաժեշտ էր Գերմանիային՝ ապահովելու իր բալկանյան թիկունքը՝ ՍՍՀՄ-ի դեմ հնարավոր ագրեսիայի դեպքում։ Նման իրավիճակում Թուրքական կառավարությունը հնարավոր է համարում խոստանալ Գերմանիային, որ չի հարձակվի նրա վրա[16]։

Անգլիան, որ Թուրքիայի միջոցով տեղյակ էր Գերմանիայի հետ նրա բանակցությունների ընթացքին, սկզբունքորեն դեմ չէր գերմանա-թուրքական դաշնագրի ստորագրման՝ այն համարելով անհրաժեշտ տուրք Գերմանիային՝ Սովետական Միության վրա հարձակվելու համար և դիտելով որպես պատերազմին ռեյխի դիվանագիտական նախապատրաստման մի մասը[17]։

Այսպիսով, Գերմանիայի՝ Սովետական Միություն ներխուժելուց դեռ շատ առաջ ակնհայտ էր, որ Թուրքական դիվանագիտության առանցքային ուղղությունը հակասովետիզմն է։ Թուրքական կառավարող շրջանները պատրաստ էին օժանդակելու ուռածդ իմպերիալիստական դաշինքի ագրեսիային՝ ՍՍՀՄ-ի դեմ։

Սվելին, բարձր գնահատելով ՍՍՀՄ-ի ռազմական ուժը[18], թուրքական կառավարությունը նման դեպքում լավագույնն էր համարում անգլո-գերմանական կոնֆլիկտի փոխզիջողական կանոնավորումը։ «Մենք վախենում ենք, որ եթե գերմանա-ռուսական ընդհարումները տեղի ունենան մինչև Անգլիայի հետ Գերմանիայի փոխըմբռնումը, պատերազմը տարիներ կտևի և նրա ավարտին երկիրը հյուծված և ավերված կլինի։ Արդյունքը կլինի Եվրոպայի բոլշևիկացումը»,—պնդում էին թուրք քաղաքագետները[19]։

Թուրքիայի արտաքին քաղաքական գծի վերը նշված առանձնահատկությունները և մի շարք այլ նկատառումներ հանգեցրին այն բանին, որ արդեն 1941 թ. հունիսի 22-ի նախօրեին Թուրքիան յուրաքանչյուր պատերազմող կողմի հետ պաշտոնապես դաշնակից էր կամ բարեկամական հարաբերությունների մեջ էր, որոնք, ինչ խոսք, դժվարությամբ էին զուգակցվում միմյանց։

Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակման առիթով թուրքական բուրժուազիայի խանդավառությունը անպատշաճության աստիճան այնքան մեծ էր, որ Սարաջոլլուն ստիպված էր հունիսի 22-ին անջատել հեռախոսը՝ աղատվելու համար այն անթիվ անհամար շնորհավորանքներից, որ ուղղված էին գերմանա-թուրքական պայմանագիրը ճիշտ ժամանակին կնքելու, ինչպես նաև դրան հետևած ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակման առիթով[20]։ Այդ լուրը ուրախությամբ ընդունեց նաև պրեզիդենտ Ինենյուն[21]։ Նույնիսկ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Անգլիայի դիրքորոշումը, թուրքական կառավարությունը Գերմանիայի նկատմամբ հետագա բարեհաճ քաղաքականության խոստումներ տվեց և պատրաստակամություն հայտնեց արդեն ներկայումս հնարավորին չափ օգնել ռեյխին։ Նա խոստացավ Գերմանիային հայտնել ՍՍՀՄ-ի սևծովյան այն բոլոր գործողությունների մասին, որոնք հայտնի կլինեն Թուրքիային։ Հավաստիացրեց, որ կարգելի սովետական ռազմանավերի անցումը նեղուցներով, ինչպես նաև թույլ չի տա ռազմական նյութերի տարանցումը ՍՍՀՄ[22]։ ՍՍՀՄ-ի նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վերաբերմունքը և սուր հակասովետիզմը ի հայտ եկան նաև թուրքական մամուլի ելույթներում։

Գերմանա-սովետական պատերազմի հետ Թուրքիայում ուժեղացան պանթուրքիստական[23] կազմակերպությունների և նրանց հարող մուսուլմանական սպիտակ էմիգրանտական կենտրոնների գործունեությունը

7—635

ները։ Պանթուրքիզմի գաղափարները բաժանում էին թուրքական բազմաթիվ քաղաքական ու զինվորական գործիչներ[24], որոնք սակայն Ռաթուրքի ժամանակից պաշտոնապես ժխտվում էին թուրքական կառավարության կողմից։ Գերմանիային ի գիտություն ներկայացված պանթուրքիստական ծրագրերը, ի մի են բերված Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի ղեկավար Վերմանի կողմից՝ հետևյալ կերպ. «Պանթուրքիստական շարժումը նպատակ ունի ստեղծել անկախ պետություններ բոլոր թյուրքական ժողովուրդների համար, որոնք ապրում են այսօրվա Թուրքիայի տարածքից դուրս։ Այսպիսով, այս տարածքները չեն կարող բոնի միացվել, բացառելով սահմանների հայտնի փոփոխությունները, սակայն քաղաքականորեն պիտի կառավարվեն Թուրքիայի կողմից... Այսօրվա սովետական տարածքների վերաբերյալ պահանջները վերաբերում են գլխավորապես Ադրբեջանին, Դաղստանին, ինչպես նաև Ղրիմին, Վոլգայի և Ուրալի միջև ընկած հսկա տարածությանը, որը ձգտում է հյուսիս՝ մինչև Թաթարական Սովետական Հանրապետություն... Բացի դրանից, այդ տարածքի մեջ են մտնում ողջ հին Թուրքեստանը՝ ներառյալ նախկին Արևելյան Թուրքեստանի Արևմտյան մասը՝ այսօրվա Սինցզյանը... Բացի դրանից, Նուրին[25] պահանջում է Իրանի հյուսիս-արևմտյան մասը մինչև Համադան... Կասպից ծովի վերին մասը սովետական հին սահմանով։ Վերջապես այստեղ ներառվում են Իրաքի տարածքից Կիրկուկը և Մոսուլը, ինչպես նաև մի շերտ Սիրիայից»[26]։ Այսպիսով, պանթուրքիստների հավակնություններն ունեին ոչ միայն հակասովետական, այլև հակաարաբական և հակաիրանյան ուղղվածություն։ Նուրի փաշան հայտնեց, որ Թուրքիայում այս գաղափարները մեծ տարածում ունեն, և շարժման մեջ ներգրավված անձանց թվում է «Կովկասյան ռազմաճակատի հրամանատարը», իսկ «բանակի մեծ մասը համակրում է նրանց»։ Նուրի փաշան ընդգծեց, որ թուրքական կառավարության թիկունքում չէ որ գործում է։ Այդ մասին նա տեղեկացրել է պրեմիեր մինիստր Սայդամին նախքան իր Բեռլին ուղևորությունը։ Գնահատելով այդ շարժման զարգացման հեռանկարները, նա այնքան հեռու գնաց, որ նույնիսկ հայտարարեց. «Համապատասխան հարմար պահի. իշխանության գլուխ, անկասկած, կանցնի մի կառավարություն, որը կընդունի այս գաղափարները»[27]։

Գերմանիայի վերաբերմունքը դուսպ էր, և Նուրի փաշան «ինչ-որ չափով հիասթափված էր», որ իր առաջարկությունը «առանց խանդա-

վառության» ընդունվեց Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության կողմից[28]։ Նոյեմբերի կեսերից Գերմանիայի հետաքրքրությունը պանթուրքիստական շարժման նկատմամբ ավելի նվազեց և պանթուրքիստների օգտագործումն էլ սահմանափակ դարձավ։ Այդ ժամանակաշրջանում Հիտլերն արտահայտեց իր վերաբերմունքը պանթուրքիստների նկատմամբ։ Պանթուրքիստական գաղափարների հրահրումն ուղված ռուսների դեմ, հակասում էր գերմանական շահերին։ «Մեր նպատակը պիտի լինի այնտեղ հաստատել նախ և առաջ մեր վերահսկողությունը և երկրի կազմակերպումը հանուն մեր նպատակների, իսկ ազգային համերաշխության զգացումի արտահայտությունը մեզ ամենից քիչ է պետք»[29]։

Թուրքիայի կառավարությունը ոչ միայն դեմ չէր թուրքական ազգություններին պատկանող և մյուս մուսուլման գերիների կենտրոնացմանը հատուկ ճամբարներում, այլև ողջ պատերազմի ընթացքում նպաստել է ՍՍՀՄ-ի դեմ լրտեսության կազմակերպմանը։

Որ չափով որ Ֆր համար թուրքական կառավարությունը անվտանգ էր համարում, նա նպաստել է Գերմանիային ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի ընթացքում, գնալով անգամ միջազգային չափանիշների խախտման։ Ինչպես հայտնի է, 1941 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Թուրքիան թույլ տվեց գերմանական «Զեյֆալկե» և իտալական «Տարվիզիոյի» պահնորդական նավերի անցումը նեղուցներով[30]։ Հիշատակության է արժանի թուրքական կառավարության բացասական վերաբերմունքը անգլիական և սովետական զորքերի Իրան մտցնելու առիթով[31], թեև այն օբյեկտիվորեն հօգուտ Թուրքիայի էր։

Այդ շրջանում թուրքական չեզոքությունը փաստորեն հանգում էր այն բանին, որ Թուրքիան չէր ցանկանում Գերմանիայի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքել։ Մի բան, որին համառորեն ձգտում էր ռեյխը մինչև 1942 թ. ամառվա վերջը։ Այստեղից էլ հետևում է Անգլիայի ու Գերմանիայի միջև հնարավոր և անհրաժեշտ դաշինքի վերաբերյալ թուրքական կոնցեպցիայի հետագա զարգացումը։ Եթե նախնական տարբերակում այն հնարավոր էր ՍՍՀՄ-ի վրա նրանց միաժամանակյա հարձակումով, ապա նույն այդ տարբերակի ավելի ուշ խմբագրությամբ նման դաշինքը հնարավոր էր ՍՍՀՄ-ի պարտությունից անմիջապես հետո փոխադիրողական հաշտության միջոցով[32]։ Չհասնելով այն բանին, որ Թուրքիան հանդես գա «առանցքի» կողմից, Գերմանիան ստիպված էր բավարարվել՝ Թուրքիային առաջարկելու լենտ-

ռոնացնել իր զորքերը սովետա-թուրքական սահմանում։ Այն նշանակում էր անուղղակի կերպով ապահովել Կովկասում առաջիկա ռազմական գործողությունների օժանդակությունը։ Թուրքական կառավարությունը համաձայնեց[33], քանզի ՍՍՀՄ-ի սահմանում զորքերի կենտրոնացումը բացի Գերմանիային աջակցելուց, առաջին հերթին համապատասխանում էր թուրքական կառավարող շրջանների ցանկություններին, այն է՝ Սովետական Միության պարտության պահին և կամ անմիջապես հետո՝ բռնի միացնել Սովետական Անդրկովկասը[34]։ 1942 թ. աշնանն արդեն այստեղ կենտրոնացել էին թուրքական 26 դիվիզիաներ, որոնց պատճառով Անդրկովկասում պահվեց սովետական զորքերի մի նշանակալի մասը։ Այն նպաստեց գերմանական ուժերի հաջողությանը Ռոստովում, նրանց առաջխաղացմանը դեպի Կուրան, Մայկոպի նավթային դաշտերի զավթմանը և այլն[35]։ Ի պատասխան 1942 թ. ամռանը ռեյխի նրա հետ ռազմական-քաղաքական դաշինք կնքելու համարյա ուլտիմատիվ[36] պնդմանը՝ Թուրքիան, հրաժարվելով հանդերձ, նորից ու նորից պնդում էր թուրքական կառավարության անփոփոխ թշնամական վերաբերմունքը Սովետական Միության նկատմամբ։ Մենեմենջիօղլուն հայտարարեց, որ «Թուրքիան, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, չափազանց որոշակիորեն շահագրգռված է բոլշևիկյան Ռուսաստանի հնարավորին չափ լիակատար պարտությամբ...»[37]։ Սարաջօղլուն արդեն որպես պրեմիեր մինիստր, իր համոզմունքն հայտնեց, որ «Ռուսական պրոբլեմը կարող է լուծվել Գերմանիայի կողմից միայն այն դեպքում, եթե ապանվի Ռուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսը»[38]։ «Ռուսաստանի կործանումը,—շարունակում էր Սարաջօղլուն,—ֆյուրերի հերոսությունն է, որի նմանը կարող է հարյուր տարին մեկ կատարվել և այն թուրքերի. էլ վաղեմի երազանքն է»[39]։ Միևնույն ժամանակ Թուրքիան կտրականապես դեմ էր Գերմանիայի կողմից Կովկասի զավթմանը[40]։ Այն ոչ մի կերպ չէր համապատասխանում նրա շահերին։ Այդ ժամանակ, ոչ միայն թուրքական կառավարությունը, այլև պանթուրքիստական և կովկասյան էմիգրանտական կազմակերպությունների գործիչները արդեն համոզվեցին, որ Գերմանիան բոլորովին էլ հակված չէ ստեղծելու կովկասյան անկախ պետություններ, առավել ևս թույլ չի տա այդ շրջաններում մի երրորդ պետության որևէ ազդեցություն[41]։ Հարկ է նշել, որ փաստաթղթերը հավաստում են Թուրքիայի փորձերը՝ բանակցություններ վարելու Անգլիայի հետ՝ Սիրիայում իր տարածքային ձգտումները բավարարելու վերաբերյալ[42]։

Իր հերթին, անգլիական կառավարությունը դիմեց Սովետական Միությանը առաջարկով՝ ուղարկել իր զորքերը Բաքվի պաշտպանությանն աջակցելու համար[43]։

Թուրքիայի դիրքորոշումը 1942 թ. ամռանը և աշնանը, թույլ է տալիս ենթադրելու, որ թուրքական կառավարությունը, Սովետական Միության պարտության պահին կամ անմիջապես հետո, անգլո-գերմանական կոմպրոմիսի հույսով, պատրաստ էր օկուպացնելու կովկասյան շրջանը, գուցե և հավակնելով Անգլիայի փոխըմբռնողությանը։ Քանդի նման իրավիճակում թուրքական զորքերի առաջխաղացումը նախ և առաջ պիտի նշանակեր նոր ամրակետի առաջացում Մերձավոր և Միջին արևելքի բրիտանական տիրույթների ճանապարհին։

Այս կամ այն կերպ, Թուրքիան կենտրոնացնելով իր զորքերը Սովետական Միության սահմանի վրա և ՍՍՀՄ-ի պարտության դեպքում պատրաստ լինելով ներխուժելու Կովկաս, սպասում էր դեպքերի հետագա զարգացմանը[44]։

Թուրքիան, 1943 թ. գարնանը, որոշակի քայլեր կատարեց մերձենալու համար Անգլիային, ԱՄՆ-ին։ Նա նույնիսկ մտահոգություն ցուցաբերեց ՍՍՀՄ-ի հետ իր հարաբերությունների վիճակի նկատմամբ։ Թուրքական դիրքորոշման նման փոփոխությունները հարուցված էին սովետա-գերմանական ճակատում գերմանական բանակի պարտությամբ, թեև թուրքական կառավարող շրջանները շարունակում էին փայփայել այն հույսը, թե Գերմանիան կկարողանա «ընդարձակ մի օպերացիայով վերջին և ուժգին հարված հասցնելու սովետներին»[45]։ Թուրքական քաղաքականության հակասովետիզմը արդեն հիմք հանդիսացավ անգլո-թուրքական փոխըմբռնման համար։ Այս իմաստով շատ բնորոշ են Ադանայում 1943 թ. հունվարի 30—31-ին Անգլիայի պրեմիեր մինիստր Վ. Չերչիլի և Թուրքիայի պրեմիեր մինիստր Շ. Սարաջօղլուի միջև տեղի ունեցած բանակցությունները։ Այստեղ եկան նաև պրեզիդենտ Ինենյուն, մարշալ Չաքմաքը, արտաքին գործերի մինիստր Ն. Մենեմենջիօղլուն[46]։ Թեև Ադանայի կոնֆերանսի արդյունքներն առաջին հայացքից հիասթափեցնող էին թվում Անգլիայի համար, և թուրքական կառավարությունը Անգլիային ոչ մի հիմք չէր տվել ենթադրելու, թե ինքը երբևէ կմտնի պատերազմի մեջ, այսուհանդերձ Չերչիլը թուրքական քաղաքականության հետագա զարգացման վերաբերյալ լի էր լավատեսությամբ[47]։

Ավելին, Չերչիլը ստիպված էր հանգստացնել թուրքական պետական գործիչներին, խոստանալով անգլիական պառլամենտում բացահայտորեն հայտարարել թե ինքը «առաջարկել է Թուրքիային զենքի անհատույց մատակարարում», որ ինքը «հույս ունի, թե Թուրքիան հավատարիմ կմնա Անգլիայի հետ պայմանագրին», և որ ինքը «ցանկանում է պատերազմից հետո ևս Թուրքիան շարունակի մնալ անվտանգության ու կարգի այնպիսի մի ամրոց, որի վրա Անգլիան կարողանա հենվել, բայց և որ այդ խնդրի լուծման համար, նա համապատասխան ուժով ապահովված պիտի լինի»[48]։

Ինչ վերաբերում է իրերի իսկական դրությանը, ապա Չերչիլը առաջ քաշելով երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակը», որն իր բնույթով ոչ պակաս հակասովետական էր, քան հակագերմանական և իր հաշվարկներով կոչված էր միաժամանակ դուրս շպրտել Գերմանիային այդ շրջանից և փակել սովետական զորքերի մուտքը Եվրոպա, հասկանում էր, որ դա չի հաջողվի առանց Թուրքիայի աջակցության։ Ուստի նա Ադանայում ձգտում էր ապահովել թուրքական կառավարության աջակցությունը առաջին հերթին հենց այս ծրագրի իրականացման համար։ Որպեսզի սովետական կառավարությանը որևէ կերպ բացատրի Թուրքիային ծայր աստիճան ուժեղացնելու և զինելու Անգլիայի ձգտումը, Չերչիլն աշխատում էր հավատացնել Սովետական Միությանը, որ Թուրքիայի մուտքը պատերազմ հակահիտլերյան կոալիցիայի կողմից՝ ռեալ է[49]։ Հետաքրքրական է, որ այդ ժամանակ «արբանյակ» երկրների բազմաթիվ պետական գործիչներ համոզված էին, որ «Արևմտյան դաշնակիցները ավելի շահագրգռված էին կանխելու սովետական ուժերի մուտքը Եվրոպա, քան թե ոչնչացնելու հիտլերյան ռեժիմը»[50]։ Նրանք հասկանում էին, որ Սովետական Միությունը պատճառներ ունի անհանգստանալու համար Թուրքիայի զինումից։ Ադանայի կոնֆերանսի առիթով շատ բնորոշ է Անկարայում հունգարական դեսպանորդ Վերնլյոյի կարծիքը. «Այլ բան է, թե ինչպես կվերաբերվի այդ կոնֆերանսին Ստալինը, որն արդեն բողոք էր հայտնել Վաշինգտոնում Թուրքիային զինելու դեմ, իրավամբ գտնելով, որ ի վերջո այն իր դեմ է ուղղված»[51]։ Ինչպես հաստատում է իր հուշերում Թուրքիայի Ռումինիայի նախկին դեսպանորդ Կրեցյանուն, Ադանայի բանակցություններում Անգլիայի և Թուրքիայի գլխավոր շտաբների բարձրագույն ներկայացուցիչների մասնակցությունը Բալկանյան երկրների կողմից գնահատվել է որպես կարևոր փուլ երկրորդ ճակատի «բալկանյան

տարբերակի» նախապատրաստման գործում[52]։ Ինչ վերաբերում է թուրքական պետական գործիչներին, ապա նրանց մեջ՝ հակահիտլերյան կոալիցիայում հնարավոր ճեղքվածքի հույս ծագեց՝ դրանից բխող արդյունքներով։ Ադանայի բանակցությունների ընթացքում Չերչիլի դիրքորոշումը թուրքական կառավարությունը դիտեց որպես «Թուրքիայի հետ համագործակցելու Լոնդոնի ձգտում՝ միասին կանխելու հեղափոխական շարժումների զարգացումը Բալկաններում և բալկանյան երկրների ազատագրումը Սովետական բանակի կողմից»[53]։ Ինչպես վկայում է Չերչիլը, իր հետ զրույցի ժամանակ, Թուրքիայի պրեմիեր մինիստրը հայտարարել է, թե «ողջ Եվրոպան սլավոններով և կոմունիստներով լեցուն է» և ավելացրել. «Եթե Գերմանիան ջախջախվի, բոլոր պարտված երկրները կդառնան բոլշևիկյան և սլավոնական»[54]։

Մոտավորապես այդ նույն ժամանակ Ռումինիայի արտաքին գործերի մինիստր Ռ. Անտոնեսկուն Բուխարեստում իտալական դեսպանորդին հաղորդեց, որ «Թուրքական դեսպանը հատկապես այցելեց ինձ, որպեսզի հաղորդի, որ Ամերիկան և, մասնավորապես, Անգլիան Եվրոպա են շտապում՝ ավարտելու պատերազմը, սակայն ամեն կերպ կցանկանային հօգուտ Ռուսաստանի եվրոպական սիստեմի տապալումից խուսափել»[55]։ 1943 թ. գարնանից Թուրքիան սկսեց ակտիվորեն նախ և առաջ դիվանագիտական մասնակցություն ցուցաբերել Չերչիլի փայփայած երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակի» նախապատրաստման գործում՝ Թուրքական կառավարությունը դիվանագիտական լարված ակտիվություն ցուցաբերել սկսեց Բալկանյան երկրներում «պետությունների ինքնապաշտպանական բլոկ», ստեղծելու նպատակով[56]։ Նշված երկրների քաղաքական գործիչների մոտ աստիճանաբար թուրքական քաղաքականության զարգացման հեռանկարի մասին որոշակի կարծիք սկսեց կազմվել։ «Մենք կարծում ենք,— հայտնում էր իր կառավարությանը հունգարական դեսպանորդը Սոֆիայում,—որ Թուրքիան հանդես կգար միմիայն այն դեպքում, եթե անգլիական և ռուսական ուժերի ճնշման ներքո գերմանացիները ստիպված լինեին հանելու իրենց զորքերը էգեյան ծովի կղզիներից և Բալկանյան թերակղզուց։ Թուրքիան, որին կաջակցեին անգլիական զորքեր, գերմանացիների գնալուց հետո առաջացած դատարկությունը կլցներ խաղաղ օկուպացնելով Բալկանները։ Թուրքիան այնտեղ կմնար մինչև Բալկանյան թերակղզու քաղաքական վերակազմավորման ավարտը։ Այդ

ժամանակաընթացքում կավարտվեր հարավ-արևելյան բլոկի ձևավորումը, որի մեջ կմտներ և Հունգարիան»[57]։

Թուրքական կառավարությունը լիարժեք ըմբռնում և արձագանք գտավ Բալկանյան երկրների կառավարող շրջաններում, որոնք առիթ էին փնտրում պայմանավորվելու արևմտյան դաշնակիցների հետ։ Թուրքական բանակցությունները գնալով ավելի ընդարձակ բնույթ էին կրում։ Նրա դիվանագիտական աշխուժությունը ընթանում էր անգլո-թուրքական շտաբների բանակցություններին զուգահեռ՝ համաձայն Ադանայում ընդունված որոշումների[58]։ Երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակի» հետ կապված Ջերչիլի ծրագրերի խորտակումը վերջ տվեց այս ուղղությամբ թուրքական կառավարության գործունեությանը։

Գնալով աճում էր ԱՄՆ-ի և Անգլիայի ճնշումը՝ հասնելու այն բանին, որ Թուրքիան մասնակցի պատերազմական գործողություններին[59], իսկ ավելի ուշ՝ Գերմանիայի հետ դիվանագիտական հարաբերությունների խզմանը և ռեյխին պատերազմ հայտարարելուն։ Այն պիտի ապահովեր Թուրքիայի անդամությունը Միավորված ազգերի կազմակերպությունում[30]։ Առանց մանրամասն կանգ առնելու Սովետական Միության նկատմամբ Թուրքիայի ունեցած դիրքորոշման վրա, հարկ է նշել, որ սովետական զորքերի հաղթական առաջխաղացումը[61] և ԱՄՆ-ի ու Անգլիայի վերը նշված որոշակի նկատառումներով աճող ճնշումը ստիպեցին թուրքական կառավարությանը իր դիրքորոշումը համապատասխանորեն սրբագրելու[62]։ Եվ վերջապես 1945 թ. փետրվարի 23-ին, Թուրքիան պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային՝ չթաքցնելով, որ անում է այն ԱՄՆ-ի և Անգլիայի ուղղակի ճնշման տակ[63]։

Թուրքիայի դիրքորոշումը պատերազմական բոլոր տարիների ընթացքում վկայում է թուրքական կառավարող շրջանների անփոփոխ հակասովետական դիրքորոշման, պանթուրքիզմին թուրքական պետական գործիչների նվիրվածության և թուրքական քաղաքական կուրսի բացառիկ շահադիտական էության մասին։ «Սառը պատերազմի» տարիներին Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց նրա մեջ՝ մինչև օրս էլ շարունակելով մնալ իմպերիալիզմի և ռեակցիայի կարևորագույն պատվար Մերձավոր արևելքում։

Р. С. КОРХМАЗЯН

ПОЗИЦИЯ ТУРЦИИ ОТНОСИТЕЛЬНО СОВЕТСКОГО СОЮЗА В ПЕРИОД ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941—1943 гг.)

Резюме

Анализ публикаций архивных документов различных стран позволяет проследить позицию турецких правящих кругов относительно Советского Союза в течение всех военных лет. Документы констатируют, что еще до нападения Германии на СССР, Турция, официально занимавшая позицию невоюющего союзника Англии и Франции, разделяла и поддерживала антисоветские планы своих союзников, готовившихся к военному выступлению против СССР (в связи с советско-финляндской войной), питала захватнические планы относительно территории Кавказа.

Позиция Турции в течение 1941—1943 гг. свидетельствует об антисоветской направленности политики турецких правящих кругов, о приверженности турецких государственных деятелей идеям пантюркизма. Антисоветизм турецких правящих кругов носил не эпизодический характер, а был основным направлением их политики. Турция была готова содействовать агрессии против СССР любого империалистического блока—стран «оси» или западных держав,—рассчитывая осуществить аннексию территории Кавказа в момент или непосредственно после поражения СССР в войне.

Последовательный антисоветизм турецкой политики позднее, в период «холодной войны», привел Турцию в лагерь империализма и реакции, чьим важнейшим оплотом на Ближнем Востоке она продолжает оставаться до сегодняшнего дня.

1 *1939 թ. մայիսի 12-ին Թուրքիայի պրեզիդենտը Ազգային մեծ ժողովում և Անգլիայի պրեմիեր մինիստրը Համայնքների պալատում հայտարարեցին, որ Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի դեպքում, Թուրքիայի և Անգլիայի կառավարությունները պատրաստ կլինեն համագործակցության և իրենց տրամադրության տակ գտնվող ամեն ինչ կօգտագործեն միմյանց օգնելու և աջակցելու համար։* (Documents on British Foreign Policy, 1919—1939, Third ser., vol. V, doc. 506 (*այսուհետև՝* DBFP).

2 Дж. Батлер, Большая стратегия, Сентябрь 1939—июнь 1941, М., 1959, с. 81; DBFP, ser. D, vol. V, doc. 144; Akten zur Deutschen Auswärtigen Politik 1918--1945, Ser. D: 1937—1945, Bd. 6, Dok. 413 (*այսուհետև՝* ADAP).

3 G. Gafencu. Last days of Europe, N. Y., 1948, p. 195—196.

4 «СССР в борьбе за мир накануне второй мировой войны». Документы и материалы, М., 1971, док. 234, 246, 265. 269, 273; «СССР и Турция. 1917—1979», М., 1981, с. 150—156: Н. Жуковский. На дипломатическом посту. М., 1973, с. 318—335.

5 Անգլո-ֆրանս-թուրքական պայմանագիրը ստորագրվեց հակառակ լայնորեն տարածում գտած այն կարծիքի, թե Թուրքիան ոչ մի պատճառ չունի հանդես գալու որևէ մեկի էղղմից (ADAP, Ser. D. Bd. 7, Dok. 448: E. Vere—Hodge. Turkish Foreign Policy 1918—1950, London, 1951, p. 130).

6 Թուրքիան, ըստ պայմանագրի, խոստացել էր օգնել իր դաշնակիցներին, եթե նրանք Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի հետևանքով ներքաշվեն պատերազմի մեջ։ Պայմանագրով չնախատեսված ագրեսիայի դեպքում Թուրքիան, համաձայն նրանց կողմից տրված երաշխիքների, պարտավոր էր՝ ամենաքիչը, բարեհաճ չեզոքություն պահպանել։ Անգլիան և Ֆրանսիան, իրենց հերթին, պարտավոր էին ամեն տեսակի օգնություն ցուցաբերել, եթե Թուրքիան հարձակման ենթարկվեր եվրոպական պետություններ կողմից և կամ այն դեպքում, եթե Թուրքիան ներքաշվեր պատերազմի մեջ՝ Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի հետևանքով։ Պայմանագրին կից № 2 արձանագրությունը իրավունք էր վերապահում Թուրքիային հրաժարվելու իր պարտականություններից, եթե նրանց իրագործումը կարող էր Սովետական Միության դեմ պատերազմի մեջ ներքաշել (Great Britain Treaty of Mutual Assistance between His Majesty in Respect of the United Kingdom, the President of the French Republic and the President of Turkish Republic, Angora, October 19, 1939):

7 «Международное положение и внешняя политика СССР». Сб. документов и материалов, М., 1939, с. 170.
Ինչպես ցույց տվեցին այս բանակցությունները, թուրքական կառավարությունը առաջարկելով Սովետական Միությունը փոխօգնության պայմանագիր կնքել՝ նկատի ունենալով Բալկանների և նեղուցների շրջանները, նախ և առաջ ձգտում էր չեզոքության քաղաքականություն վարող ՍՍՀՄ-ին անուղղակիորեն ներքաշել Անգլիայի և Ֆրանսիայի հետ անուղղակի դաշինքի մեջ։ Թուրքական կառավարության առաջարկած սովետա-թուրքական դաշնագրի հետևանքով ՍՍՀՄ-ը կարող էր ներքաշվել Գերմանիայի և Իտալիայի դեմ պատերազմի մեջ՝ չունենալով որևէ երաշխիք Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ (История дипломатии т. IV., М., 1975, с. 23—24; СССР и Турция. 1917—1979, с. 154—156).

8 Տե՛ս՝ „Die Geheimakten des französischen Generalstabes" (Auswärtiges Amt 1939/41. № 6), Berlin, 1941; Р. Юрьев. Подготовка Англии и Франции к нападению на Советский Союз с юга в 1939—1940 годах, „Вопросы истории", 1949, № 2; Я. К. Караосманоглу, Дипломат поневоле (Воспоминания и наблюдения), М., 1966.

9 Die Geheimakten..., dok. 20.

10 Die Geheimakten..., dok. 26. 28.

11 Die Geheimakten..., dok. 20.

12 Documents on German Foreign Policy 1918—1945 (այսուհետև՝ DGFP), Ser D: 1937—1945, vol. XII, doc. 514.

13 DGFP, ser. D, vol. XII, doc. 514, 523.
14 DGFP, ser. D, vol. XII, doc. 514, 523, 595.
15 DGFP, ser. D, vol. XII, doc. 556.
16 Foreign Relations of the United States. Diplomatic Papers (այսուհետև՝ FR), 1941, vol. 3. British Commonwealth. The Near East and Africa, Washington, 1959, p. 867. *Մաքսիերբեյ Հելլին 1941 թ. 21—հուլիսի։ Տե՛ս նաև Թուրքական դեսպանի հետ Հիտլերի զրույցի գրառումը 1941 թ. հունիսի 19—ին։* („Staatsmänner und Diplomaten bei Hitler". Zweiter Teil, Frankfurt M., 1970. S. 53 - 541).
17 FR, 1941, vol. III, p. 854. H. Knatchbull—Hugessen, Diplomat in Peace and War, London, 1949, p. 169—170.
18 *Թուրքական թերթերը մատնանշում էին Սովետական Միության ռազմական հզորությունը,* „Ulus", „Yeni Sabah", „Tan" *և այլն՝ 1941թ. հունիսի 23—ից։*
19 DGFP, ser. D, vol. XII, doc. 514.
20 L. Krecker. Deutschland und die Türkei im Zweiten Weltkrieg, Frankfurt /Main, 1964, S. 190; DGFP, ser. D vol. XII, doc. 670.
21 „Milliyet", 8·10·1967.
22 DGFP, ser. D, vol. XIII, doc. 2; J. Glasneck, Die Türkei im deutsch-anglo-amerikanischen Spannungsfeld, J. Glasneck. I. Kircheisen, Türkei und Afghanistan—Brennpunkte der Orientpolitik im zweiten Weltkrieg, Berlin 1968, p. 149.
23 *Գերմանական փաստաթղթերում և գրականության մեջ հիմնականում օգտագործվում է «Թուրանիզմ» տերմինը։*
24 *Գերմանիայի Արտաքին գործերի մինիստրության ուշադրությունը հրավիրելով այդ հարցի վրա, Պապենը նշում է, որ «Թուրքական կառավարող շրջանները գնալով ավելի շատ են սկսում զբաղվել թուրք-ռուսական սահմանի այն կողմում գտնվող իրենց հայրենակիցների, մանավանդ՝ ազրբեջանական թուրքերի ճակատագրով։* („Документы Министерства иностранных дел Германии", вып. 2. Германская политика в Турции (1941—1943), 1946, док. 10, с. 34) *Գլխավոր շտաբի Ակադեմիայի պետ Ալի Ֆուադ Էրդենը հավաստիացրեց Պապենին, որ Թուրքիան զոհ կլիներ, եթե Կովկասում ստեղծվեր տեղի ժողովուրդների ֆեդերացիա փոքրիշատե կախված Թուրքիայից, իսկ Կովկասից Արևելք անկախ թուրանական պետության կազմավորումը՝ լավագույնը կհանդիսանար որոշումներից։* (DGFP, ser. D, vol. XIII, doc. 125. *Պապենը Ռիբբենտրոպին, 1941 թ. հուլիսի 18—ին)։*
Ավելի ուշ, Գերմանական արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար Վեյցզեկերի հետ զրույցի ժամանակ, Բեռլինում թուրքական դեսպանը «բավականին բացահայտ ասել էր այն մասին, որ հետագայում հնարավոր է Կովկասյան ժողովուրդներին միավորել մեկ բուֆերային պետության մեջ և ակնարկել, որ Կասպից ծովից արևելք ևս հնարավոր էր ստեղծել անկախ թուրքական պետություն... Էրդենը չհապաղեց շոշափել հիմնական հարցը՝ բնութագրելով Բաքուն որպես մի՝ քաղաք, որ ողջ բնակչությունը խոսում է թուրքերեն։» („Документы МИДа Германии", док. 11, с. 40—41; DGFP, ser. D, vol. XIII, doc. 179. *Վեյցզեկերը՝ Ռիբբենտրոպին, 1941 թ. օգոստոսի 5-ին)։*

25 Նույնիսկ Նուրի փաշան (Քըլըղըլ) Էնվեր փաշայի եղբայրը, որը կազմակերպության ղեկավարներից էր, հասկանում էր, որ անհնարին է պահանջել Գերմանիայից Թուրքիային անմիջապես միացնելու արդեն գրավված կամ գրավվելիք շրջանները։

26 DGFP, ser. D. vol. XIII. doc. 361. Վեոմանի 1941 թ. սեպտեմբերի 26-ի մեմորանդումը, տե՛ս նաև doc. 194. ծանոթագրություն 5; doc. 298; „Документы МИДа Германии", док. 10, с. 34—39.

27 DGFP, ser. D, vol. XIII, doc. 361. Թուրքիայում պանթուրքիստական կազմակերպությունների գործունեության մասին տե՛ս Р. П. Кондакчян. Внутренняя политика Турции в годы второй мировой войны, 1978, с. 164—219:

28 Գերմանիային նախ և առաջ զսպում էր իր և Թուրքիայի միջև սերտորեն դաշնակցելու հարցում պաշտոնական կառավարող շրջանների դիրքորոշման և պանթուրքիստական կազմակերպությունների գործունեության միջև եղած տարակարծությունը։ Գերմանիային շահավետ չէր նաև պանթուրքիստների ծրագիրը։ (Տե՛ս „Нюрнбергский процесс", Сб. материалов в семи томах, т. II, с. 584) Ռիբբենտրոպին ուղղված իր հուշագրում Վեոմանը՝ համահնչուն Հիտլերի գաղափարներին ուղղակիորեն նշում է. «Սովետական Միության պարտությունից հետո նախկին Ռուսաստանի տարածքը պետք է գտնվի միմիայն Գերմանիայի, ոչ թե այլ պետությունների տիրապետության ներքո»։ «Նավթային շահերի տեսակետից» Վեոմանը անցանկալի էր գտնում Մոսուլի շրջանի հանձնումը Թուրքիային, թեև որոշակի հանգամանքների դեպքում հնարավոր էր համարում նման քայլը։ Մինչդեռ Բաթումի և Բաքվի շրջանների Թուրքիայի ձեռքն անցնելը միանգամայն բացառում էր։ (DGFP ser. D, vol. XIII, doc. 361).
Թերևս միայն Թուրքեստանում էր հնարավոր համարում «քաշալերել Թուրքիային դաշնակից թուրքական պետության ստեղծումը»։

29 DGFP, ser. D, vol. XIII, doc. 475. Հեվելի 1941 թ. նոյեմբերի 15—ի մեմորանդումը։
Հետագա ողջ ժամանակաընթացքում Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը, աջակցելով և ֆինանսավորելով պանթուրքիստական կազմակերպություններին՝ նրանց օգտագործել է թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու և լրտեսության համար։ („Новейшая история Турции", М., 1968, с. 191).

30 «Внешняя политика Советского Союза. 1946 год». 1952, с. 167—168.

31 Дж. Батлер, Дж. Гуайер. Большая стратегия. Июнь 1941—август 1942, М.. 1967. с. 155.

32 1941—43 թթ. թուրք-գերմանական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Корхмазян Р. С., Турецко—германские отношения в годы второй мировой войны, Ереван, 1977, с. 91—133.

33 «Документы МИДа Германии», док 16, стр. 58—59; док. 18, стр. 73; ADAP, Ser. E, Bd. 1, Dok. 97.

34 Գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումը Մոսկվայի մատույցներում, Սովետական Միության դեմ, «կայծակնային պատերազմի» ծրագրի խորտակումը, գուցե և առաջին անգամ Թուրքիային բերեց այն հետևության, որ անգլո-ամերիկա-սովետական լիակատար հաղթանակը հնարավոր է։ Այս տարբերակը նույնպես

«Թուրքիային նպատակահարմար չէր։ Բացատրելով Թուրքական կառավարության դիրքորոշումը, Պապենը զեկուցում էր Բեռլին. «... Հնարավոր ելքը Սովետական Ռուսաստանի օգնությամբ անգլո-ամերիկյան դաշինքի լիակատար հաղթանակն է։ Թուրքիայի կարծիքով դա համազոր էր Եվրոպայի լիակատար կործանման, քանզի ո՛չ Անգլիան և ո՛չ էլ ԱՄՆ-ը ի վիճակի չեն լինելու կանգնեցնել ոչ ռուսների ճնշումը տարածքային հարցում և ո՛չ էլ կարողանալու են կանխել պատերազմից հյուծված, տանջված ու աղքատացած Եվրոպայի բոլշևիկացումը»։
(Документы МИДа Германии", док. 16, с. 55; ADAP, Ser. E, Bd. 1, Dok 97).
Հակահիտլերյան կոալիցիայի մասնակիցներից միայն Սովետական Միության պարտությունն էր շարունակում երաշխավորել Թուրքական կառավարությունը։
Այսպես, Մեննեմենշիողլուն պնդում էր, որ ինքը և արտաքին գործերի մինիստր Սարաջողլուն տիրնդ անգլիացի բարեկամների մոտ կասկած չեն թողել, որ Թուրքիան ցանկանում է պարտված տեսնել սովետներին։ Թուրքիան երբեք և ոչ մի տեսակետից չի կարող ցանկանալ, որ Ռուսաստանի հաղթանակի դեպքում, Եվրոպայում նոր կարգերի հաստատման դեպքում Սովետական Միությունը որոշակի ազդեցություն ունենա։ Միևնույն ժամանակ, Թուրքական այդ հայացքների կոնկրետացումը այսօր քաղաքական ակտ կնշանակեր, որը Թուրքիան չի կարող իրեն թույլ տալ»։ (Документы МИДа Германии", док. 18, с. 72—73. Պապենը արտաքին գործերի մինիստրությանը. 1942 թ. դեկտեմբերի 16։ Քաղաքական զեկուցագիր):

35 С. М. Штеменко, Генеральный штаб в годы войны, кн. I, М; 1968, с. 54. Այստեղ էր գտնվում սովետական 45-րդ բանակը։ Իրանա-Թուրքական սահմանին կանգնած էր հրաձգային և տանկային բրիգադներով ուժեղացված 15-րդ հեծելազորային կորպուսը, եթե Թուրքիան Բաքվի վրա հարձակվեր Իրանի վրայով։

36 Գերմանական դիվանագետների հայտարարություններում կրկին երևան եկած սպառնալիքներն արդեն սոսկ սովորական գերմանական դիվանագիտական գործ էլ չէին։ Դրանց ետևում սքողված էին գերմանական դիրքորոշման զգալի փոփոխությունները՝ Թուրքիայի հետ հետագա հարաբերությունների հարցում։ 1942 թ. ամռանը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը կազմեց մի ծավալուն փաստաթուղթ «Թուրքիայի դատապարտելի քաղաքականությունը «առանցքի» երկրների նկատմամբ՝ պատերազմում»։ Այստեղ տեղ էին գտել Թուրքական կառավարության նկատմամբ ունեցած Գերմանիայի բոլոր պահանջները՝ սկսած 1939 թ. հոկտեմբերի 19-ի անգլո-ֆրանս-Թուրքական պայմանագրից։
(DZA Potsdam, A. A., P.ol. № 61173, Bl. 82 ff.)

37 «Документы МИДа Германии», док. 26, с. 92: Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. օգոստոսի 26—ին։

38 «Документы МИДа Германии», док. 27, с. 98. Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ., օգոստոսի 27—ին։

39 «Документы МИДа Германии», док. 27, с. 98.

40 «Документы МИДа Германии», док. 26, с. 91; док. 29, с. 110—111.

41 «Документы МИДа Германии», док. 25, с. 88. Դիտմանը՝ Տիպպել-սկիրլեին, 1942 թ. օգոստոս 5—ին։

42 ADAP, Ser. E, Bd. 2, Dok. 120. Ռիբբենտրոպը՝ Պապենին, 1942 թ. ապրիլի 8-ին։

43 «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.». т. I, док. 77. с. 69. Ջերչիլը՝ Ի. Վ. Ստալինին, 1942 թ. հոկտեմբերի 9-ին։

44 1942 թ. հոկտեմբերի 25-ին Ռումինիայում Թուրքիայի դեսպան Թանրրովերը այդ երկրի պրեմիեր մինիստրի տեղակալի հետ զրույցի ժամանակ նշեց, որ «Ռուսաստանը, ինչպես և առաջներում, Թուրքիայի համար առաջին թշնամին է և որ Թուրքիան կշարունակի խիստ չեզոքություն պահպանել»։

(„Документы МИДа Германии". док 32, с. 124).

45 J. Glasneck, op. cit. s. 137.

Ստալինգրադի մոտ և Հյուսիսային Աֆրիկայում գերմանական բանակի պարտությունը Թուրքական կառավարող շրջաններում երկակի ռեակցիա առաջ բերեց։ Գերմանական դեսպանի վկայությամբ, դաշնակիցների հաղթանակը էլ-Ալամեյնի մոտ, Թուրքիայի պետական գործիչների կողմից ընդունվեց «մեծագույն թեթևությամբ»։ Քանզի նրանք, ինչպես նշում է Պապենը, երբեք երջանիկ չեն զգացել գերմանական բանակի մոտիկությունից իրենց երկրի հյուսիսում, արևմուտքում և հարավում։ (F. von Papen, Memoirs, London, 1952, p. 493.)

Ընդհակառակը, Սովետական Միությունում գերմանական բանակի նահանջը Թուրքական կառավարող շրջաններում մեծ հիասթափություն առաջ բերեց։ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ասքր Գյունդուզը Գերմանիայի զինվորական կցորդից չէր թաքցնում «այն մեծ մտահոգությունը», որ «Ռեյխին երևի չի հաջողվի ավարտին հասցնելու գործողությունը Արևելյան ճակատում, որը պիտի ապահովեր Եվրոպայի անվտանգությունը։ („Документы МИДа Германии". док. 33, с. 126. Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. դեկտեմբերի 2-ին)։ Դաշնակիցների հաղթանակի նկատմամբ Թուրքիայի նման ռեակցիայի մասին է նշում Ստամբուլում գլխավոր հյուպատոս Ջեյլերը. «Թուրքիան բոլորովին չէր ցանկանա տեսնել Անգլիայի դուրս մղումը Միջերկրական ծովից (Սուեզի նեղուցը), մյուս կողմից հաջողություններ է ցանկանում Ռուսաստանի դեմ մեր արշավանքի ժամանակ և անկեղծորեն մտահոգված է նրանով, որ շատ թե քիչ երկարատև պայքարում մեր ուժերը գուցե չբավականացնեն՝ հաղթելու համար ռուսներին։ Այս իմաստով նա ավելի քիչ է շահագրգռված, քան երբևէ՝ քանզի պատերազմի վերջնական հաղթանակի վերաբերյալ Թուրքական տեսակետը ծայրաստիճան կասկածելի է»։ („Документы МИДа Германии", док. 35. с 132: Ջեյլերը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. դեկտեմբերի 9—ին)։

46 «...եթե անգլիական համաշխարհային կայսրության պրեմիեր մինիստրի այցը Թուրքիա ինքնին շատ նշանակալից դեպք է, ապա ավելի շատ մտածելու տեղիք է տալիս նրան ուղեկցող անձանց կազմը։ Օրինքով, նման շքախումբ ընդունված է ունենալ արտակարգ ռազմական իրավիճակներում։ Այդ իսկ պատճառով,—հաղորդում էր Անկարայում հունգարական դեսպանորդ Յանոշ Վերնլյոն Հունգարիայի պրեմիեր մինիստրին և արտաքին գործերի մինիստր Միկլոշ Կալլային,—սկզբում ես չէի ուզում հավատալ, որ Ադանայում, իրականում ոչինչ էլ չի կատարվել։

(„Венгрия и вторая мировая война". Секретные и дипломатические доку-

ments iz istorii kanuna i periода voiny. Док. 157, с. 292 Վերջինի հեռագիրը Մ. Կալլայիին. 1943 թ. փետրվարի 10-ին).

47 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89. Վ. Չերչիլը՝ Ի. Վ. Ստալինին, 1943 թ. փետրվարի 1-ին.

48 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 291.

49 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89.
Սովետական կառավարությանը ուղղված Անգլիայի պրեմիեր մինիստրի հայտարարությունների «Կոնսպեկտը» և անգլո-թուրքական կոնֆերանսի համաձայնեցված հետևությունները պարունակում էին Աղանայի բանակցությունների բնույթի մասին ոչ լրիվ տեղեկություններ։ Այնուհանդերձ Թուրքիայի քաղաքականության անգլիական գնահատման բացառիկ լավատեսությունը ընդունվեց բավականին գուսպ։ („Переписка ...". док. III, էջ 90—91. Ի. Վ. Ստալինը՝ Վ. Չերչիլին).

50 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 292.

51 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 292.

52 A. Cretzianu. The lost opportunity, London (1957). p. 87.

53 Ըստ В. Л. Израэлян. Л. Н. Кутаков, Дипломатия агрессоров. Германо-итало-японский фашистский блок. История его возникновения и краха, М., 1967, с. 280.

54 У. Черчилль. Вторая мировая война, т. 4, М., 1955, с. 693.
Թուրքական պետական գործիչները պնդում էին, որ «Գերմանիայի լիակատար պարտությունը ամբողջ կտոր Ռուսաստանին դառնալու մեծագույն վտանգը Թուրքիայի և Եվրոպայի համար։ (F. von Papen, op. cit., p. 494—495; T. Atay Turkish Foreign Policy 1939—1945. Ankara, 1965. p. 107):

55 Ըստ В. Л. Израэлян, Л. Н. Кутаков, указ. соч. с. 280.

56 Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը մի անգամ չէ, որ այն միտքն է արտահայտել, թե «Գերմանիայի հնարավոր պարտությունը կխաթարի հավասարակշռությունը Եվրոպայում և քաոս կտիրի։ Ուստի անհրաժեշտ է ինչ-որ կերպ կանխել դրա տարածումը»։ Մենեմենջիօղլուն գտնում էր, որ այն երկրները, որոնք ըստ էության կապ չունեն ներկայիս իմպերիալիստական պատերազմի հետ, պետք է կարգի և անվտանգության բլոկ կազմակերպեն՝ սահմանափակելու համար քաոսի տարածումը։ Նկատի են առնվում Թուրքիան, Հունաստանը, Բուլղարիան, Հարավսլավիան, Ռումինիան և Հունգարիան»։ (.Венгрия и вторая мировая война, док. 157, с. 291).

57 «Венгрия и вторая мировая война». док. 157. с. 291.

58 «Переписка...», т. I, с. 392.

59 Дж. Эрман. Большая стратегия. Август 1943—сентябрь 1944, М., 1958, с. 232—233, 241; Documents on American Foreign Relations, vol. VI, с. 2

60 Միավորված ազգերի կազմակերպությունում Թուրքիայի անդամությունը հարցը լուծվեց 1945 թ. փետրվարի 4—11-ը Յալթայում տեղի ունեցած ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարների Ղրիմի կոնֆերանսում։ („Тегеран—Ялта—Потсдам" Сб. документов, М., 1971, с. 157—158)

61 1944 թ. գարունը, թուրքական դիրքորոշման փոփոխությունը գերմանական Գլխա-

վոր շտաբի կարծիքով հետևանք էր սովետական զորքերի Ղրիմում և Սև ծովում տարած հաղթանակների։ (Kriegstagebuch des Oberkommados der Wenrhmacht 1941—1945. Bd. IV I, S. 810—811.)

62 1944 թ. ապրիլի 20-ին Մեջլիսում Մենեմենջիօղլուն խոսում էր Թուրքիայի մասին ոչ թե իբրև չեզոք պետության, այլ ինչպես «Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների դաշնակցի։ «Եթե այնպես պատահի, որ Թուրքական ազգի շահերը պահանջեն, որ մենք մեկ անգամ ևս զենք վերցնենք, դա մեզ համար անակնկալ չպիտի լինի։ Եկեք գիտակցաբար և նյութապես միշտ պատրաստ գտնվենք.— շարունակեց հայտարարել Մենեմենջիօղլուն (ըստ T. Ataöv, cit., p. 121—122).

1944 թ. օգոստոսի 2-ին հետևեց Գերմանիայի հետ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների խզման մասին հայտարարությունը։ Այդ քայլին Թուրքական կառավարությունը ցուցադրաբար ստիպողական բնույթ տվեց։ Մի հանգամանք, որ լիովին համապատասխանում էր իրերի իսկական դրությանը։ Ինչպես ասում են՝ Թուրքիան և Գերմանիան «բաժանվեցին որպես բարեկամներ» („Правда". 30.8.1944; „Большевик" № 16. 1944; H. Knatchbull—Hugessen, op. cit., p. 202; F. von Papen, op. cit., p. 527; KTB OKW, Bd. IV/I p. 679).

Ճապոնիայի հետ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների խզումը 1945 թ. հունվարի 5-ին, իսկ հունվարի 12-ին՝ ըստ լենդ-լիզի սովետական Միությունը բեռներ տեղափոխող դաշնակիցների նավերի համար նեղուցների բացումը ևս արդյունք էր Արևմտյան դաշնակիցների չբուլացող ճնշման։

63 1945 թ. փետրվարի 20-ին Անկարայում անգլիական և ամերիկյան դեսպանները տեղեկացրին Թուրքական կառավարությանը Ղրիմի կոնֆերանսի որոշմանը։ Փետրվարի 23-ին Թուրքական կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային։ Թուրքական կառավարությունը բացահայտորեն ընդունեց, որ այդ քայլին է դիմել իրեն առաջարկած պայմանների ճնշման տակ։ «...Մենք պատերազմի մեջ մտանք գերմանացիների և ճապոնացիների դեմ՝ միմիայն դաշնակիցների պահանջով,—հայտարարեց Թուրքիայի պրեզիդենտը,—նրանց համար դա երևի ինչ որ նշանակություն ուներ, որի համար էլ պնդում էին»։

(İnönü'nün Söylev ve Demeçleri, İstanbul, 1946, p. 394).